Մասիս համայնքի ղեկավար

Դավիթ Համբարձումյանին

ՀՀ-ում Իսլանդիայի Պատվո Հյուպատոս

Լևոն Հայրապետյանի կողմից

Դիմում-առաջարկ

Հարգելի պարոն Համբարձումյան,

Ինչպես Ձեզ հայտնի է, 2023 թվականի դեկտեմբերի 6-ին ժամը 01:00 սահմաններում Երևան քաղաքի Հերացի փողոցում միմյանց են բախվել Մասիսի համայնքապետարանին սեփականության իրավունքով պատկանող "Toyota" մակնիշի 676CG61 պետական համարանիշի և իմ կողմից վարած "Maserati" մակնիշի 40T086 պետ համարանիշի ավտոմեքենաները (այսուհետ «Դեպք»): Դեպքի կապակցությամբ հարուցվել է թիվ 60510323 քրեական վարույթը, որի շրջանակներում, ես ամբողջոցին ընդունել եմ իմ մեղավորությունը և հայտնել պատրաստակամություն Մասիսի համայնքապետարանին Դեպքի հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ:

Նշեմ, որ Դեպքի հետևանքով վնաս է հասցվել Մասիսի համայնքապետարանին սեփականության իրավունքով պատկանող "Toyota" մակնիշի ավտոմեքենային: Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իմ կողմից որպես պատճառված վնաս ենթակա է վերանորոգման տվյալ ավտոմեքենան, սույնով առաջարկում եմ նշված վնասված մեքենան վերանորոգելու փոխարեն, Մասիսի համայնքապետարանին նվիրաբերել նույն մակնիշի և ավելի թարմ վիճակում գտնվող ավտոմեքենա, իսկ վնասված մեքենան նվիրատվության պայմանագրով համայնքապետարանից օտարել իմ կողմից նշված անձին, քանի որ չեմ հանդիսանում ՀՀ քաղաքացի և ՀՀ-ում չեմ կարող ունենալ իմ անունով հաշվառված ավտոմեքենա:

Նշված գործարքների արդյունքում իմ կողմից Մասիսի համայնքապետարանին պատճառված վնասն ամբողջությամբ կհամարվի մարված:

Առաջարկը ընդունելու դեպքում պատրաստակամ եմ հնարավորինս սեղմ ժամկետում նոր մեքենան փոխանցել համայնքապետարանին:

Գրկ՝ 5664
16.04.2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4
Հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

N 3424, *19 ապրիլ 2024թ.*

ՀՀ-ՈՒՄ ԻՍԼԱՆԴԻԱՅԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ
ԼԵՎՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան.

Ի պատասխան Ձեր Մասիսի համայնքապետարան հասցեագրված դիմում առաջարկին՝ 2023 թվականի դեկտեմբերի 6-ի Երևան քաղաքի Հերացի փողոցում վթարի հետևանքով համայնքապետարանին սեփականության իրավունքով պատկանող «Toyota» մակնիշի փոխադրամիջոցի վնասի վերականգնման վերաբերյալ,տեղեկացնում եմ, որ Մասիսի համայնքապետարանը տալիս է իր համաձայնությունը Ձեր առաջարկին:

Նշված իրավական գործընթացը ապահովելու համար անհրաժեշտ է Մասիս համայնքի ավագանու համաձայնությունը՝ Ձեր կողմից առաջարկվող մեքենան որպես վնասի փոխհատուցում ընդունելուն,իսկ վթարված /շահագործման ոչ պիտանի/ ավտոմեքենան Ձեր կողմից նշված անձին անհատույց տրամադրելուն:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով համայնքապետարանի նախնական համաձայնությունը՝ մինչև ավագանուց համաձայնություն ստանալը առաջարկում եմ ներկայացնել Ձեր կողմից առաջարկվող մեքենայի տեխնիկական բնութագիրը:

Համայնքի ղեկավար **Դավիթ Համբարձումյան**

Կատ. Իրավաբանական բաժնի պետ՝ Լ. Աստրաբացյան

Մասիս համայնքի ղեկավար
Դավիթ Համբարձումյանին

ՀՀ-ում Իսլանդիայի Պատվավոր Հյուպատոսություն
Պատվավոր Հյուպատոս
Լևոն Հայրապետյանից

Հարգելի պարոն Համբարձումյան,

Ի պատասխան Ձեր 19.04.2024թ. թիվ 3424 գրության, Մասիսի համայնքապետարանին սեփականության իրավունքով պատկանող "Toyota" մակնիշի ավտոմեքենայի պատճառված վնասը հատուցելու նպատակով, ստորև ներկայացնում եմ համայնքապետարանին որպես փոխանակում առաջարկվող մեքենայի տեխնիկական բնութագիրը ավագանու նախնական համաձայնությունը ստանալու համար.

TOYOTA COROLLA 1.6
Համարանիշ՝ 37BG783
Տեսակ՝ ԹԵԹԵՎ ՄԱՐԴԱՏԱՐ
Գույն՝ ՍԵՎ ՄԻԿԱ
Թող. տարեթիվ՝ 2017
Թափք՝ ՍԵԴԱՆ
VIN՝ NMTBB4JEX0R217507
Ծարժիչ՝ 90 / 122
Տեխ. անձնագիր՝ YB691386

Նախնական համաձայնությունը ստանալու դեպքում, խնդրում եմ հայտնել հետագա քայլերի վերաբերյալ:

Հարգանքով՝

CONSULATE OF ICELAND
ARMENIA

Ելք՝ 6307
02.05.2024թ